

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18.03.2020թ. N 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտ 2020 թվականի N 39

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N03
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի N 03 արտահերթ նիստի օրակարգը.

- 1.Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի կենտրոն»բյուջետային հիմնարկը «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն»համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը, կանոնադրությունը և ամրացվող գույքի կազմը հաստատելու մասին
- 2.«Հրազդանի համայնքային գրադարան»համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և կանոնադրությունը հաստատելու մասին
- 3.Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց գույք օտարելու մասին
- 4.Տեղական վճարների արտոնություն կիրառելու մասին
5. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,21312 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա կիսաքանդ շինությունը նվիրաբերության կարգով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին
6. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
7. Սուբվենցիայի հայտին հավանություն տալու մասին
8. Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին

9. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարները վերադարձնելու մասին

10. «Համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԳ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՍՈՒՐԱՂՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

18 մարտ 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտ 2020 թվականի N 40

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
 ՀԻՄՆԱՐԿԸ <<ՀՐԱԶԴԱՆԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>>
 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ,
 ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
 ԱՄՐԱԳՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և 28-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վերակազմակերպել Հրազդանի համայնքապետարանի <<Մշակույթի կենտրոն>> բյուջետային հիմնարկը <<Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել <<Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման N 1, 2 հավելվածների:
3. Հաստատել <<Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը համաձայն սույն որոշման N 3 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ - 10

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՄԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

18 մարտ 2020թ.
ք.Հրազդան



Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի մարտի 18-ի
N 40 որոշման

Կազմված է 18 մարտ 2020թ.

Բաղկացած է 8 թերթից

«Հաստատված է»


ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2020թ. մարտի 18-ի

N 40 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝



Ս. Միքայելյան



Տպագրված է՝ ընդամենը 5 օրինակից

Օրինակ 2

Գրանցված է

ՀՀ «Իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի

գործակալության» կողմից

«--» -----2020թ

Գրանցման համարը՝ -----

ՀՎՀՀ՝ -----

/ստորագրություն/

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՐԱԶԴԱՆԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2020 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է (այսուհետև՝ Համայնք)՝ ի դեմս Հրազդան համայնքի ավագանու (այսուհետև՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Հրազդան համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4. Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկը դադարեցնում է իր գործունեությունը, և Կազմակերպությունը հանդիսանում է Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկի իրավահաջորդը:

1.5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.6. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.7. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.10. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար:

1.11. Կազմակերպության անվանումն է՝

«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.12. Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, մարզ Կոտայք, քաղաք Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

2.1.1. մշակութային (թատերական և համերգային) գործունեության իրականացում,

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է (այսուհետև՝ Համայնք)՝ ի դեմս Հրազդան համայնքի ավագանու (այսուհետև՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Հրազդան համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

1.11. Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, մարզ Գոտայք, քաղաք Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

2.1.1. մշակութային (թատերական և համերգային) գործունեության իրականացում,

2.1.2. թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորում և բավարարում,

2.1.3. ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում և զարգացում,

2.1.4. դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրություն,

2.1.5. տոնական և հիշատակի օրերին նվիրված, ինչպես նաև այլ միջոցառումների կազմակերպում,

2.1.6. իր ենթակայությամբ գործող քաղաքային մանկական զբոսայգում, մշակույթի տներում գեղագիտական, հոգևոր, ազգային և հայրենասիրական դաստիարակության, ստեղծագործական ունակությունների ձևավորման, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացման, մշակութալուսավորչական աշխատանքների, հանգստի և ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպման համար հնարավոր պայմանների ստեղծում:

2.2. Կազմակերպությունն իր գործունեության նպատակներն իրականացնելու համար՝

2.2.1. ինքն է ընտրում իր գործունեության գեղարվեստական և ստեղծագործական ուղղվածությունը, խաղացանկը. ինքնուրույն ընդունում որոշումներ՝ ներկայացման հրապարակային ցուցադրման, գովազդային նյութերի հրապարակման վերաբերյալ,

2.2.2. ինքնուրույն ձևավորում է ստեղծագործական անձնակազմը,

2.2.3. ինքնուրույն ծրագրում է իր հիմնական գործունեությունը և նկատի առնելով կնքված պայմանագրերն ու սպասարկվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների պահանջները՝ մշակում է հեռանկարային ծրագրեր,

2.2.4. ինքն է ընտրում իր ստեղծած ներկայացման շահագործման եղանակները, ընդ որում՝ ներկայացումը ստեղծող հեղինակների և այլ անձանց (որոնց մտավոր սեփականությունն օգտագործված է ներկայացման մեջ) իրավունքների պահպանման պայմանով կարող է այդ ներկայացման բեմադրության, կինոնկարահանումների, տեսագրման, ձայնագրման ու հեռուստատադիտեռաբաժանման իրավունքը փոխանցել այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև տալ թույլատվություն կինոօրինակների բազմացման, իրացման ու

տարածման համար,

2.2.5. պայմանագրային հիմունքներով օգտագործում է մտավոր սեփականության օբյեկտները,

2.2.6. գովազդի նպատակով օգտագործում է սեփական ձևաթղթերը (պաշտոնական անվանումը և խորհրդանիշը) իր հավաքածուներում ու ֆոնդերում եղած գեղարվեստական մշակութային արժեքների պատկերները ու վերատպությունները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով թույլատրվում է այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ օգտագործելու վերոհիշյալ նյութերը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

2.2.7. անցկացնում է ստեղծագործական երեկոներ, փառատոներ և մրցույթներ,

2.2.8. ինքնուրույն կազմում է իր տնտեսական ծրագիրը, սահմանում տոմսերի, այլ ծառայությունների և արտադրանքի իրացման կարգը, որոշում դրանց գները, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

2.2.9. գործունեության ապահովման նպատակով պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց,

2.3. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 2.3.1. տեսագրությունների և ձայնագրությունների (սեփական ներկայացումների և համերգների) վերարտադրություն,
 2.3.2. ձայնագրությունների (սեփական) հրատարակություն,
 2.3.3. ռադիո-հեռուստասարքերի մեծածախ առևտուր (սեփական ձայնապնակների, ձայներիզների, խտաշար (կոմպակտ) սկավառակների և տեսահոլովակների մեծածախ առևտուր),
 2.3.4. ուրիշ խմբավորումներում չներառված պոլիգրաֆիական գործունեություն (թատերական և համերգային ադրագրերի ու ծրագրերի տպագրություն),
 2.3.5. թատերական և համերգային դահլիճների գործունեություն:

- 2.4. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:
 2.5. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:
 2.6. Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:
 3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
 Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
 3.2.1. Կազմակերպության հիմնադրումը,
 3.2.2. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
 3.2.3. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:
 3.2.4. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
 3.2.5. Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,
 3.2.6. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
 3.2.7. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
 3.2.8. Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը,
 3.2.9. օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
 3.3. Լիազորված համայնքային մարմինը (Հրագդան համայնքի ղեկավարը)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն

գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հրազդան համայնքի ղեկավարը՝

3.3.1. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

3.3.2. իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

3.3.3. կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

3.3.4. լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

3.3.5. վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

3.3.6. վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

3.3.7. հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

3.3.8. հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

3.3.9. որոշում է տոմսերի, այլ ծառայությունների և արտադրանքի իրացման կարգն ու զները,

3.3.10. իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառնություններ:

3.4. Կազմակերպության գործադիր մարմինը.

3.4.1. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Հրազդան համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

3.4.2. Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Հրազդան համայնքի ղեկավարը,

3.4.3. Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին,

3.4.5. Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

3.4.6. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար,

3.4.7. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

3.4.8. Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

3.5.1. առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

3.5.2. ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3.5.3. տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

3.5.4. աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

3.5.5. բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

3.5.6. սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

3.5.7. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

3.5.8. ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

3.5.9. որոշում է ընդունում կազմակերպության տրանսպորտային միջոցների օգտագործման վերաբերյալ,

3.5.10. հաստատում է կազմակերպության ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոնները,

3.5.11. ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,

3.5.12. իրականացնում է ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից:

4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Հրագրան համայնքի ղեկավարի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում Հրագրան համայնքի բյուջեից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կողմից մշակութային գործունեությանը տրամադրած դրամաշնորհներից: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1. Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2. Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Հրազդան համայնքի բյուջե:

6.3. Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Աշխատակիցների թվաքանակը՝ 20

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի «Մշակույթի կենտրոն» բյուջետային հիմնարկ	Տնօրեն	1	280000	280000
2		Հաշվապահ	1	95000	95000
3		Գործավար	1	93000	93000
4		Մասնագետ	1	93000	93000
5		Գրադարանավար	1	93000	93000
6		Ժող.գործ.անսամբլի գեղ.ղեկավար	1	93000	93000
7		Ռեժիսոր	1	93000	93000
8		Գանձապահ-ադմինիստրատոր	1	93000	93000
9		Դերասան	6	93000	558000
10		Հսկիչ	1	93000	93000
11		Պահակ	2	93000	186000
12		Բեմի բանվոր	1	93000	93000
13		Հավաքարար	1	93000	93000
14		Հանդերձապահ	1	93000	93000
	Ընդամենը		20		2049000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Թիվ 2 մշակույթի տուն

[illegible]

Մանկական զբոսայգի

Գույքի անվանումը	Արժեքը	Ակտ		Մուտք		Փաստացի առկայությունը		Հաշվապահական հաշվառմ. տվյալն.	
		քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
Ֆոտոտաղավար	15000					1	15000	1	15000
Ընթերցարահ	25000					1	25000	1	25000
Խաղասենյակ	20000					1	20000	1	20000
Զուգարան 6 տեղ.	6000					1	6000	1	6000
Էստրադային հրապ.	55000					1	55000	1	55000
Երկաթյա տնակ	10000					1	10000	1	10000
Ընդամենը							131000		131000

Մշակույթի կենտրոն

Գույքի անվանումը	Արժեքը	Ելք		Մուտք		Փաստացի առկայությունը		Հաշվապահական հաշվառմ. տվյալն.	
		քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
Զանգ						20	0		
Աստղ						20	0		
Լույսեր						120	0		
Խաղալիքներ փոքր						59	0		
Խաղալիքներ մեծ						105	0		
Աստղ						37	0		
Գրականություն		22	1100			23	1150	45	2250


Թիվ 1 մշակույթի տուն

Գույքի անվանումը	Արժեքը	Ակտ		Մուտք		Փաստացի առկայությունը		Հաշվապահական հաշվառմ. տվյալն.	
		քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)	քանակը	արժեքը (դրամ)
Մշակ. տան շենք	13190000					1	13190000	1	13190000

Հրագրանի դրամատիկական թատրոն

Գույքի անվանումը	Տարեթիվ	Քանակը	Սկզբնական արժեքը	Կուտ. Մաշվածք
Դահլիճի աթոռներ	1977	228	500	114000
Ամբիոն	1977	1	2000	2000
	1980		12000	24000
	2015		4950	108900
Ընդամենը				248900
Հագուստներ				
Բեմական հագուստ	2011	0	0	0
Ընդամենը				0
Արագամաշ առարկան.				
Վարագույր շղարշե	2006	1	1000	1000
Ընդամենը				1000
Ընդհանուր				249900

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտ 2020 թվականի N 41

<<ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի
1-ին մասի 15-րդ կետով և 28-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների
մասին>> օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել <<Հրազդանի համայնքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային
կազմակերպությունը:
2. Հաստատել <<Հրազդանի համայնքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային
կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և
կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման N 1, 2 հավելվածների:
3. <<Հրազդանի համայնքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային
կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել սույն որոշման N 3
հավելվածով հաստատված գույքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՄԱՍՈՒՆ

Shirley

Lee H. ...

James

[Signature]

L. M. ...

U. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

18 մարտ 2020թ.
ք.Հրազդան



Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի մարտի 18-ի
N 41 որոշման

Կազմված է 18 մարտ 2020թ.

Բաղկացած է 6 թերթից

«Հաստատված է»


ՀՀ Կոտայքի մարզի

Հրազդան համայնքի ավագանու

2020թ. մարտի 18-ի

N 41 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝

 Ս. Սիքայեյան /

Տպագրված է՝ ընդամենը 5 օրինակից

Օրինակ 2

Գրանցված է

ՀՀ «Իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի գործակալության»

կողմից

«--» -----2020թ

Գրանցման համարը՝ -----

ՀՎՀՀ՝ -----

/ստորագրություն/



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2020 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է:

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հրազդան համայնքն է /այսուհետ՝ Համայնք/ ի դեմս Հրազդան համայնքի ավագանու /այսուհետ՝ Հիմնադիր/, իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Հրազդան համայնքի ղեկավարը:

1.4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկյա մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9. Կազմակերպությունում չի թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝

Հայաստանի Հանրապետություն, մարզ Կոտայք, քաղաք Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան և հիմնական նպատակներն են՝

2.1.1. մշակութային գործունեության իրականացում,

2.1.2. բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկում, գիտության և մշակութային լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի գործունեության օժանդակում,

2.1.3. գրքերի և տպագիր նյութերի գրադարանային ֆոնդը կազմող այլ նյութերի արդյունավետ օգտագործում,

2.1.4. քաղաքականության, հայ համաշխարհային գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում և լուսաբանում, բնակչության քաղաքական, բարոյական, գեղագիտական դաստիարակություն, ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրության ձևավորում մասնագիտական որակի զարգացում գրադարանային մատենագիտական գիտելիքների ուսուցում ու տարածում, բնակչության ազատ ժամանակի կազմակերպում,

2.1.5. գրադարանային նոր ձևերի ու մեթոդների մշակում, դրանց արմատավորում և տարածում, գրադարանային ֆոնդերի համալրման և հարստացման, հաշվառման, մշակման, բաշխման, սպասարկման, գիտատեխնիկական համակարգի և գիտամեթոդական աշխատանքների կազմակերպում,

2.1.7. գրադարանային ֆոնդի պաշտպանվածության և անվտանգության ապահովում,

2.1.8. գրադարանային ֆոնդի համալրում, գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով,

2.1.9. ազգային և արտասահմանյան պետությունների մշակութային, գիտական հարստությունների, միջազգային հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն,

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում է Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

3.2.1. Կազմակերպության հիմնադրումը,

3.2.2. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների սահմանումը,

3.2.3. Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

3.2.4. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

3.2.5. Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

3.2.6. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

3.2.7. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

3.3. Լիազորված համայնքային մարմինը (Հրազդան համայնքի ղեկավար) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում չկատարման, ոչ պատշաճ կատարման համար:

3.4. Հրազդան համայնքի ղեկավարը՝

3.4.1. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

3.4.2. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

3.4.3. կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրություններն ու ցուցումները,

3.4.4. լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

3.4.5. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

3.4.6. վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

3.4.6. հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունը և տարեկան հաշվեկշիռը,

3.4.7. իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,

3.4.8. հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

3.4.9. իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ

3.5. Կազմակերպության գործադիր մարմինը՝

3.5.1. կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Հրազդան համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

